Գ. ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920—1967 ԹԹ.)

Վերածնված հայ ժողովուրդը մեծ Հոկտեմբերի 50-ամյակը դիմավորում է տնտեսական և կուլտուրական շինարարության վիթխարի նվաճումներով: Սովետական իշխանության տարիներին Հայաստանը դարձել է հզոր ինդուստրիայի, կոլեկտիվ գյուղատնտեսության, ծաղկող գիտության ու առաջավոր կուլտուրայի երկիր:

Սովետական հասարակության զարգացումը իրենից ներկայացնում է կուլտուրական հզոր վերելքի մի պատկեր: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը, երկրի տնտեսական վերածնության հետ մեկտեղ, մեծ ուշադրություն դարձրին ժողովրդի հոգևոր կուլտուրան բարձրացնելու գործին:

Մշակվեց և պատմական կարճ ժամանակամիջոցում իրագործվեց կուլտուրական հեղափոխության մի վիթխարի ծրագիր: Իր իսկական բարգավաճումը ապրեց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան:

Մեր հանրապետությունը սովետական իշխանության տարիներին ծածկվել է ուսումնական հաստատությունների, գիտա-հետազոտական ինստիտուտների, արվեստի և կուլտուրայի օջախների խիտ ցանցով: Բնակչության կուլտուրական մակարդակի աննախընթաց աճը զուգակցվել է գրահրատարակչական և գրադարանագիտության գործի անշեղ զարգացմամբ:

Գիրքը հասարակության, գիտության ու տեխնիկայի, կուլտուրայի և արվեստի զարգացման կարևոր միջոցն է: Մարդկության պատմության ընթացքում կուտակված գրքերի և այլ տպագիր արտադրանքի քանակը հաշվում է մի քանի տասնյակ միլիոն անուն, որոնք ունեն պատմական-գիտական և կուլտուրական մեծ արժեք: Եվ իրոք, մարդկությունը հազարամյակների ընթացքում իր ստեղծագործական մտքի հարուստ գանձարանը ամփոփել է գրքերի մեջ՝ ապահովելով նրա հավիտենական տարածումն ու զարգացումը: Գիրքը մարդկության մտքի զարգացման այն հավերժական արգասիքն է, որի միջոցով մարդկային հասարակայնության մի սերունդ, իր ստեղծած հոգևոր և կուլտուրայի արժեքները հաջորդաբար հաղորդում է մյուս սերնդին:

Գիրքը մարդու լավագույն բարեկամն է, նրա խորհրդատուն, գիտելիքների աղբյուրը: Հոգ տանելով, որպեսզի բոլոր աշխատավորները կարողանան լայնորեն օգտվել լուսավորության ու կրթության իրավունքներից, Վ. Ի. Լենինը պահանջում էր ստեղծել ուսումնական հաստատությունների և կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց, այն պլանաչափ տեղադրել ամբողջ երկրով մեկ:

Ներկայումս մեր երկրում միլիոնավոր տպաքանակներով են հրատարակվում գրքեր, մի հանգամանք, որը խոշոր չափով նպաստում է գրադարանային ցանցի ընդարձակմանն ու նրանում գրքային ֆոնդերի հարստացմանը: Այս-

պես, եթե 1913 թ. ցարական Ռուսաստանում հրատարակվել էր 90 միլիոն տրպարանակով գիրք և բրոշյուր, գործում էր 76 հազար գրադարան 46 միլիոն գրքային ֆոնդով, ապա միայն 1966 թ. հրատարակվել է 1,5 միլիարդ օրինակ տպաքանակով գիրք ու բրոշյուր և գործել են 380 հազար տարբեր տիպի գրադարաններ, 2 միլիարդ 500 միլիոն գրքային ֆոնդով։ Այսպիսով, 1966 թ. գրքերի տպաքանակը, 1913 թ. համեմատությամբ, ավելացել է 22 անգամ, գրադարանների թիվը՝ 5 անգամ, իսկ գրքային ֆոնդերինը՝ 54 անգամ։

Չնայած Հայաստանը աշխարհի հնագույն երկրներից մեկն է իր պատմական կուլտուրայով, սակայն հայ ժողովուրդը անցյալից շատ աղքատիկ ժառանգություն ստացավ, հատկապես ժողովրդական կրթության և գրադարանագիտության բնագավառում։

Դեռևս մեր թվարկության առաջին դարում հայերը ունեցել են իրենց ազգային թատրոնը, իսկ V դարի սկզբին ստեղծվեց Մեսրոպյան դպրությունը՝ հայ գիրն ու գրականությունը։ Ռուս մեծանուն գրող Վալերի Բրյուսովը իր «Տարեգրություն հայ ժողովրդի պատմական ճակատագրի» աշխատության մեջ գրում է. «Հայ ժողովուրդը ժամանակակից հնագույն կուլտուրական ժողովուրդներից մեկն է։ Նա մեր աշխարհն է եկել այնպիսի հեռավոր անցյալից, երբ ոչ միայն գոյություն չեն ունեցել ժամանակակից եվրոպական ժողովուրդները..., այլ հազիվ էին պատմական ասպարեզ եկել անտիկ հնության ժողովուրդները՝ հռոմեացիք և հելլենները»[1]։

Հայաստանում գրադարանային գործի պատմությունը սերտորեն կապված էր հայ գրի ու գիտության զարգացման հետ։

Հայ մեծատաղանդ պատմիչ-մատենագետ Ղազար Փարպեցին դեռևս V դարում հիշատակում է էջմիածնում գտնվող իր գրքի մասին։ Հետագայում հատկապես X դարից սկսած, երբ հայ մշակույթը սկսում է վերելք ապրել, Հայաստանի տարբեր գավառներում վանքերին կից կազմակերպվում են կրթության կենտրոններ, ճեմարաններ, համալսարաններ իրենց հռչակված գրադարաններով, ինչպիսիք էին Հաղպատի, Գլաձորի, Տաթևի, Դոշտվանքի, Սանահինի և Անիի արքայական ճեմարանին կից գրադարանները։ Այդ գրադարանները ոչ միայն խոշոր դեր են խաղացել միջնադարի հայ մշակույթի ծաղկման գործում, այլև հանդիսացել են գիրն ու գրականությունը օտար նվաճողներից պահպանելու և հետագա սերունդներին հասցնելու լավագույն միջոցներից մեկը։

Միջին դարերից սկսած հայ բնաշխարհի քաղաքական ծանր ու դժնդակ իրադարձությունների պատճառով բնակչության խոշոր զանգվածները թողել են հայրենիքը և դաղթել մոտիկ և հեռավոր երկրներ, հաստատվել այնտեղ, ստեղծել են իրենց տնտեսական, հասարակական և մտավոր կյանքը, արվեստը, գրականությունը, տպագրությունը։ Սակայն կար մի ընդհանուր կապ հայաբնակ դաղութների և հայ բնաշխարհի միջև, դա մայրենի լեզուն էր և հայրենիքի վերածննդի գաղափարը։

Դարերով ճնշված հայ ժողովուրդը ուներ մի նվիրական իղձ, որ վերջապես կգա մի գեղեցիկ օր և ժողովուրդը կազատագրվի օտար նվաճողներից ու խավարից, և երկրի ստեղծագործ ուժերը վերստին կկարողանան ստեղծել մշակութային և գիտական նորանոր արժեքներ։ Միայն Հոկտեմբերյան սոցիալիս-

---

1 Վ. Բրյուսով, Տարեգրություն հայ ժողովրդի պատմական ճակատագրի, Վենետիկ, 1931, էջ 29։

տական մեծ հեղափոխության գաղափարը հայ ժողովրդին բերեց այդ բաղձալի օրը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ մեր ժողովուրդը տեր է դարձել դարերի ընթացքում իր ստեղծած կուլտուրական գանձերին։

Անցած 47 տարիների ընթացքում մեր հանրապետությունում իր աննախընթաց վերելքն է ապրել գրահրատարակչական և գրադարանային գործը։ Եթե Հայաստանում 1913 թ. հրատարակվել է 55 անուն գիրք և բրոշյուր 80 հազար օրինակ տպաքանակով, գործել են 13 գրադարան 120 հազար կտոր գրքային ֆոնդով, ապա 1966 թ. հրատարակվել է 1100 անուն գիրք 7 միլիոն տպաքանակով, գործել են 2740 գրադարան 25 միլիոն կտոր գրքային ֆոնդով։ Բավական է հիշատակել, որ թողարկվող գրքերի տպաքանակները, 1913 թ. համեմատ, 1966 թ. ավելացել է 87 անգամ, գրադարանների թիվը՝ 210, գրքային ֆոնդերինը՝ 288 անգամ։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում հրատարակվել է ավելի շատ գիրք, քան նախահեղափոխական ժամանակաշրջանի 400 տարվա ընթացքում։

Եթե մինչև հեղափոխությունը Հայաստանի 100 բնակչին ընկնում էր միջին 0,9 կտոր գրադարանային գիրք, ապա ներկայումս այն կազմում է 1087 կտոր։

Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերին կուսակցությունը և կառավարությունը հոգ տարան գրադարանային գործի կազմակերպման և զարգացման համար, այդ գործը մեզ մոտ ստացավ պետական կարևոր նշանակություն։ Գիտության և կուլտուրայի բոլոր նվաճումները ժողովրդական լայն մասսաների սեփականությունը դարձնելու մեջ էլ դրսևորվեց գրադարանների դերը։

Սովետական գրադարանը դա կուլտուր-լուսավորական մի հիմնարկ է, որը կազմակերպում է հասարակական եղանակով գրքերից օգտվելը և կոչված է գրականության նպատակասլաց ընտրությամբ, գրքի ակտիվ պրոպագանդայի և ընթերցանության միջոցով աջակցելու բնակչության կուլտուր-տեխնիկական գիտելիքների հարստացմանը։

Մեր երկրում բնակչության գրադարանային սպասարկման կազմակերպման գործում մեծ դեր խաղացին Վ. Ի. Լենինի կողմից նշված դրույթները։ Նա բազմիցս ընդգծել է, որ ժողովրդի կուլտուրական վերելքը պայմանավորված է երկրում գրադարանային գործի վիճակով ու նրա զարգացումով։

«Պետք է ձգտել հասնել այն բանին,— գրում է Լենինը,— որ թերթերն ու գրքերը, որպես կանոն պետք է ձրի բաշխվեն միայն գրադարաններին ու ընթերցասրահներին, նրանց ցանցին, որը կանոնավոր կերպով սպասարկում է ամբողջ երկրին...

Այն ժամանակ ժողովուրդը հարյուր անգամ ավելի ուժեղ թափով ավելի արագ ու ավելի հաջող կգիմի դեպի գրագիտությունը, դեպի լույսը, դեպի գիտությունը։ Այն ժամանակ լուսավորության գործը 7 մղոնանոց քայլերով առաջ կընթանա»[2]։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 151։

Գրադարանային գործի վերաբերյալ լենինյան ցուցումները, գիրքը աշխատավոր լայն մասսաների մեջ տարածելու մասին կոմունիստական կուսակցության և կառավարության մշտական հոգատարությունը ապահովեցին գրադարանային գործի չտեսնված ծաղկումը մեր երկրում։

Գրադարանային գործը դարձավ մեր կուսակցության գաղափարական աշխատանքի կարևոր մասը, սովետական մարդու կոմունիստական աշխարհայացքի կազմավորման ու ձևավորման հզոր միջոցը։

* * *

Գիրքը և պարբերական մամուլը հաստատուն մուտք են գործել մեր ժողովրդի կենցաղի մեջ, դարձել են յուրաքանչյուր բանվորի, կոլտնտեսականի, մտավորականի և սովորողի հավատարիմ օգնականն ու բարեկամը, գիտելիքների ու ոգեշնչման կարևոր աղբյուրներից մեկը։

Գնալով բարձրանում է բնակչության հետաքրքրությունը դեպի մարդկության կուտակված գիտելիքները, գրքերը, նրանց հոգևոր ու կուլտուրական արժեքները։ Բնականաբար, այսպիսի պայմաններում ավելի է մեծանում տպագիր արտադրանքի նշանակությունը, որպես մարքսիզմ-լենինիզմի վեհ գաղափարների, գիտության ու տեխնիկայի նվաճումների, աշխատանքի առաջավոր փորձի պրոպագանդման, աշխատավորների հանրակրթական գիտելիքների խորացման, արտադրական ունակությունների կատարելագործման, նրանց հոգևոր ու կուլտուրական պահանջմունքների բավարարման զորեղ միջոցի։

Մեր երկրում օրըստօրե աճում է գրքերի և պարբերականների տպաքանակները, բարելավվում են նրանց բովանդակությունը, բարձրանում է հրատարակությունների որակը, որոնք ի սպաս են դրվում մշտապես աճող սովետական մարդկանց գրականության նկատմամբ պահանջների լրիվ բավարարմանը։ Վերը նշված հանգամանքը լայն հնարավորություն է ստեղծել հանրապետությունում զարգացնելու գրադարանային շինարարությունը։ Ներկայումս մեզ մոտ գործում են տարբեր տիպի գրադարաններ՝ մասսայական, մասնագիտական, տեխնիկական, գիտական և դպրոցական գրադարաններ, որոնք ապահովում են բնակչության բոլոր խավերի գրականության նկատմամբ պահանջները ըստ բնակավայրի և ըստ աշխատավայրի։

Հանրապետության գրադարանային աշխատողները օգտագործելով ընթերցողների սպասարկման առավել ակուն ձևերն ու մեթոդները, ստեղծում են ամենալայն հնարավորությունները, որպեսզի գրքային անսպառ հարստություններից օգտվեն ընթերցող բոլոր խավերը՝ բանվորն ու գիտնականը, ինժեներն ու տնային տնտեսուհին, ուսանողն ու կոլտնտեսականը և այլ մասնագիտության տեր մարդիկ։

Այսօր գրադարանների ճնշող մասը հսկայական փորձ է կուտակել, գիրքը և պարբերական մամուլը արդյունաբերության և գյուղատնտեսական արտադրության, գիտության զարգացման, սովորողների ուսուցմանը ծառայեցնելու գործում։

ՍՄԿԿ Կենտկոմի 1959 թվականի սեպտեմբերի 22-ի՝ «Երկրում գրադարանային գործի զարգացման և նրա վիճակի բարելավման միջոցառումների մասին» որոշման լույսի տակ, հանրապետության գրադարանները անցած տարի-

ների ընթացքում բնակչության գրադարանային սպասարկման ուղղությամբ հասել են զգալի հաջողությունների։

Հանրապետությունում ներկայումս գործող 2740 գիտական, տեխնիկական, մասնագիտական և մասսայական գրադարաններից միայն 1966 թվականի ընթացքում օգտվել են 850 հազար ընթերցող, որոնց տարեկան ընթերցանության համար տրվել է 16 միլիոն կտոր գիրք, բրոշյուր և հանդես, այդ թվում՝ կուլտուրայի մինիստրության սիստեմի 1069 միայն մասսայական գրադարաններում ընթերցողների թիվը կազմել է 552 հազար 400 մարդ, իսկ գրքի տացքը՝ 11 միլիոն 7000 կտոր։ Այս թվերի հետևում երևում է հանրապետության կուլտուրայի օրգանների և մյուս կազմակերպությունների գրադարանային աշխատողների մեծ կազմակերպչական, ստեղծագործական և անձնուրաց աշխատանքը։

Հանրապետության բնակչության գրադարանային սպասարկման, գրադարանային գործի տեսության և պրակտիկայի հիմնական պրոբլեմների գիտական մշակման գործում, առաջատար դերը պատկանում է Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանին՝ հայ տպագիր գրքի և մամուլի ամենախոշոր կենտրոնին։

Վեց միլիոնի հասնող գրքային հարուստ ու բազմաբովանդակ հավաքածուները ծառայեցված են նպաստելու էկոնոմիկայի, գիտության ու կուլտուրայի զարգացմանը։ Գրադարանից տարեկան օգտվում են շուրջ 25 հազար մշտական ընթերցողներ, որոնց ընթերցանության համար տրվում է մեկ ու կես միլիոն կտոր տպագիր հրատարակություններ։ Գրադարանը ընթերցողների տարբեր խմբերի տրամադրության տակ է դնում հայ առաջին տպագիր գրքից («Պարզատումար», Վենետիկ, 1512 թիվ) և առաջին հանդեսից («Ազդարար», Մադրաս, 1794 թիվ), մինչև մեր օրերում տպագրված գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ գրքեր, ամսագրեր և թերթեր։

Գրադարանի ֆոնդերը հարուստ են նաև ՍՍՀՄ և արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականությամբ։

Գրադարանը որպես հայ գրականության և մատենագիտական կենտրոն մշակում է գրադարանային գործի կազմակերպման տեսության բազմաթիվ ակտուալ հարցեր, ուսումնասիրում, ընդհանրացնում և մասսայականացնում է գրադարանների աշխատանքի առաջավոր փորձը, գործնական և մեթոդական օգնություն է ցույց տալիս մասսայական գրադարաններին։ Վերջին տասնամյակում Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանը գիտահրատարակչական լայն գործունեություն է ծավալել հայ տպագիր գրքի պատմության, մատենագիտության և գրականագիտության ուղղությամբ։

Միջգրադարանային աբոնեմենտի հարուստ ֆոնդերից 1966 թվականին օգտվել են շուրջ 600 աբոնեմենտներ (տարբեր տիպի գրադարաններ ու կազմակերպություններ)։

Գրադարանը ակտիվ գրքափոխանակություն է կատարում արտասահմանյան 35 երկրների 100-ից ավելի գրադարանների ու առանձին կազմակերպությունների հետ։

Հայկական ՍՍՀ-ի մյուս խոշոր գիտական գրադարաններից է գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ և 20-ից ավելի գիտա-հետազոտական ինստիտուտների այուղային գրադարանները, Երևանի պետական համալսարանի, հանրապետական բժշկական գիտական, գիտատեխնիկական հանրապետական և ուրիշ կազմակերպությունների գրադարաններ։

Անցած տարիների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել գյուղական բնակավայրերի բնակչության գրադարանային սպասարկման կազմակերպման վրա։

Գյուղական բնակավայրերում ներկայումս գործում են 419 գյուղական ինքնուրույն 2 միլիոն 285 հազար գրքային ֆոնդով և 452 ակումբին կից՝ 1 միլիոն 194 հազար գրքային ֆոնդով գրադարաններ, որոնք կազմակերպում են գյուղական աշխատավորությանը գրականությամբ բավարարելու գործը։ Գյուղում գրադարանային գործի զարգացման այսպիսի մասշտաբներ և տեմպեր չի ունեցել ուրիշ ոչ մի երկիր։

Հայաստանի գյուղական բնակավայրերում սովետական իշխանության տարիներին ձևավորվեց նոր ընթերցող, որը անհագ ձգտում է դեպի գիտելիքները, դեպի գիրքը, անգրագիտության վերացումը, տարրական և յոթնամյա ընդհանուր կրթությունը, նորագույն տեխնիկայի ներդրումը, մեխանիզատորական կադրերի թվի և գյուղական ինտելիգենցիայի աճը։

Գյուղատնտեսական աշխատանքի լայն մասնագիտացումը, ագրոզոոտեխնիկական ուսուցումը լական ներգործություն ունեցան կոլտնտեսային գյուղացիության կուլտուրական մտահորիզոնի ձևավորման և հետաքրքրությունների ընդլայնման վրա, բարձրացրին նրանց ձգտումը գրքերի նկատմամբ և ապահովեցին ընթերցողների կոնտինգենտի աճը գյուղական գրադարաններում։

Վերը նշված գրադարաններից միայն 1966 թվականին օգտվել են 250 հազար ընթերցողներ, որոնց տրվել է շուրջ 3 միլիոն 800 հազար կտոր գիրք և բրոշյուր։ Ստեփանավանի, Սիսիանի, Արտաշատի, Գորիսի, Շամշադինի շրջանների գրադարանները լուրջ քայլեր են կատարել գիրքը յուրաքանչյուր ընտանիքին հասցնելու ուղղությամբ։

Ուշագրավ է Ստեփանավանի շրջանի Լեջան, Մարտունու՝ Ծովինար, Ալավերդու՝ Ղաշաղան, Ղափանի՝ Դավիթ-Բեկ և ուրիշ շրջանների գյուղական գրադարանների լավագույն աշխատանքների փորձը։

Գյուղական բնակչության գրադարանային սպասարկման գործի կազմակերպմանն ու զարգացմանը խոշոր մասնակցություն են ունեցել տեղական սովետական և տնտեսական շատ կազմակերպություններ, մասնավորապես կոլտնտեսություններ և սովխոզներ, որոնք հսկայական գումարներ են հատկացրել կառուցելու գյուղական կուլտուրայի տներ, ակումբներ, գրադարաններ, դպրոցներ, ձեռք են բերել համապատասխան անհրաժեշտ գրադարանային գույք և գրականություն։

Ներկայումս Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Շամշադինի, Հրազդանի և ուրիշ շրջանների հարյուրից ավելի հոյակապ շենքերում են գործում գրադարանները։

Հանրապետական վարչական 38 շրջանային կենտրոնների աշխատավորության գրադարանային սպասարկումը կազմակերպելու նպատակով ստեղծվել են գրադարանների նոր տիպ՝ շրջանային գրադարաններ, այդ գրադարաններում ներկայումս կենտրոնացված է շուրջ 765 հազար կտոր գիրք և բրոշյուր, ընթերցողների թիվը կազմել է 48 հազար մարդ, որոնց ընթերցանության է տրվել 1 միլիոն կտոր գիրք և բրոշյուր։ Շրջանային գրադարանները դարձել են գրքի պրոպագանդայի իսկական օջախներ և իրականացնում են շրջանի մյուս գրադարաններին ցույց տրվող գործնական ու մեթոդական օգնությունը։ Գորիսի, Ալավերդու, Էջմիածնի, Ստեփանավանի, Վեդու, Սիսիանի, Արտաշատի,

Հրազդանի շրջանային գրադարանները այդ ուղղությամբ հասել են զգալի հաջողությունների։

Հանրապետության քաղաքային բնակչության գրականության նկատմամբ պահանջների բավարարման գործին է ծառայեցված 108 քաղաքային գրադարաններ, 2 միլիոն 745 հազար գրքային ֆոնդով, որոնցից միայն 1966 թվականին օգտվել են 184 հազար ընթերցողներ, իսկ գրքատայքը կազմել է 4 միլիոն կտոր գիրք, բրոշյուր և հանդես։ Քաղաքային գրադարանները իրենց գրքային անսպառ հարստությունները ի սպաս են դրել բանվոր-ծառայողների, սովորող երիտասարդության և բնակչության տարբեր խավերի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը։ Կատարելագործելով գրքի պրոպագանդայի և ընթերցողների հետ տարվող աշխատանքի ձևերն ու մեթոդները, հասել են գրքային ֆոնդերի առավել արդյունավետ օգտագործմանը։

Երևանցիների, Լենինականցիների, Կիրովականցիների, Դիլիջանցիների սիրելի վայրն է դարձել Ավ. Իսահակյանի անվան, քաղաքային կենտրոնական, Մ. Գորկու անվան, Ղ. Աղայանի անվան և մյուս քաղաքային գրադարանները։ Վերջին տարիներին վերը նշված գրադարաններում կիրառվում է ընթերցողների սպասարկման դիֆերենցված եղանակ։ Լայն ծավալ է ստանում տեղեկատու-մատենագիտական և երկրագիտական աշխատանքներ։ Գրադարանների բազմապիսի ցանցում իրենց ուրույն տեղն են գրավում հանրապետությունում գործող 57 մանկական և 1270 դպրոցական գրադարաններ, որոնք խոշոր դեր են խաղում մատաղ սերնդի կոմունիստական դաստիարակության գործում։ Պատանի ընթերցողների շրջանում դեռևս մեծ անելիքներ ունի Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանը, որը կոչված է կոորդինացնելու դրպրոցահասակ երեխաների հետ աշխատող գրադարանների գործունեությունը։ Լավ հիմքերի վրա են դրված պատանիների ընթերցանության ղեկավարումը Ստեփանավանի, Գորիսի, Իջևանի շրջանային մանկական, Երևանի և Լենինականի քաղաքային կենտրոնական և ուրիշ գրադարաններում։ Վերը նշված գրադարանները սերտ կապեր են հաստատել դպրոցների մանկավարժական կոլեկտիվների, պիոներական, կոմերիտական կազմակերպությունների և ծնողների հետ։

Հիմնարկ-ձեռնարկների բանվոր-ծառայողների կուլտուրական և արտադրա-տեխնիկական մակարդակի բարձրացման գործում խոշոր դեր են խաղում արհմիութենական գրադարանները։ Ներկայումս հանրապետությունում գործող 98 արհմիութենական գրադարաններ գրքի ակտիվ պրոպագանդամամբ օգնում են արմատավորելու աշխատանքի առաջավոր փորձը, հարստացնում են աշխատավորների հանրակրթական գիտելիքները և կուլտուր-տեխնիկական մակարդակը։

Տեխնիկական պրոգրեսի, գիտության նորագույն նվաճումների և այն արմատավորման լայն տարածման գործում նշանակալի դերը պատկանում է գիտական, տեխնիկական և մասնագիտական գրադարաններին։ Ներկայումս գործող 295 այդպիսի գրադարանների, շուրջ 13 միլիոն գրքային ֆոնդով, գործունեությունը ուղղված է այդ նպատակին։

Հանրապետության գրադարանային աշխատողների շրջանում անցած 47 տարիների ընթացքում աճել են բազմաթիվ այդ գործի հմուտ կազմակերպիչներ, գրքի պրոպագանդայի աշխատանքներին նվիրված էնտուզիաստներ, որոնց

շնորհակալ գործը բարձր է գնահատվում մեր կուսակցության և կառավարության կողմից։

Մեր հանրապետությունում 1958 թվականի նոյեմբերի 11-ին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով սահմանվեց՝ «Հանրապետության վաստակավոր գրադարանավար» պատվավոր կոչումը, մինչև օրս այդ կոչման են արժանացել տարբեր տիպի գրադարանների 109 աշխատողներ, 25 հոգի պարգևատրվել են Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով, 50 աշխատողներ՝ ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության և 200 աշխատողներ՝ հանրապետության կուլտուրայի մինիստրության պատվոգրերով։

Վերջերս ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով 5 գրադարանային աշխատողներ պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով (Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական դրադարանի գիտական գծով դիրեկտորի տեղակալ, հանրապետության վաստակավոր գրադարանավար Հ. Կոստիկյանը, Պատվո նշան շքանշանով՝ Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղի գրադարանի վարիչ Ժ. Հովհաննիսյանը, Աշխատանքային արիության մեդալներով՝ Սիսիանի շրջանային գրադարանի վարիչ, հանրապետության վաստակավոր գրադարանավար Ի. Մինասյանը, Ալավերդու շրջանի Ղաչաղան գյուղի գրադարանի վարիչ Հ. Սարգսյանը և Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարանի դիրեկտոր Վ. Մարդարյանը)։ Այս բոլորը վառ վկայություն են այն բանի, թե որքան բարձր է գնահատվում մեր երկրում գրադարանավարի համեստ և շնորհակալ աշխատանքն ու մասնագիտությունը, մի բան, որ ոգևորում ու թևավորում է հետագա մեծ գործերին՝ հանրապետության բնակչության գրադարանային սպասարկման կուլտուրան էլ ավելի բարձրացնելու համար։

1966 թվականի հունվարից մինչև 1967 թվականի հուլիս ամիսը անցկացվեց գրադարանների համամիութենական ստուգատես նվիրված մեծ Հոկտեմբերի 50-րդ տարեդարձին։

Ստուգատեսը լայն հնարավորություններ ստեղծեց հանրապետության գրադարանային աշխատողների ստվար ջոկատի համար՝ էլ ավելի բարելավելու բնակչության գրադարանային սպասարկման գործը և գրքի ակտիվ պրոպագանդմամբ նպաստելու աշխատավորության կոմունիստական դաստիարակությանը։

Անտարակույս է, որ գրադարանային աշխատողները ջանք չեն խնայի կյանքում հաջողությամբ կենսագործելու Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարի որոշումները՝ գրադարանների գրքային հարստությունները դարձնել լայն մասսաների սեփականություն և դա կլինի մեր գրադարանավարների հիանալի նվերը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին, սովետական գրադարանային սիստեմի և նրա հետագա զարգացման գաղափարական ոգեշնչողի Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին։